Ռաֆֆի

Հիշողություն

Հեռո՛ւ, հեռո՛ւ, ո՞վ սև մտքեր,
Ինչո՞ւ դուք ինձ տանջում եք,
Մի՞ քրքրեք իմ հին վերքեր,
Սիրտս հանգիստ թող տվեք:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, ո՞վ տխրադես
Հիշողություն և կրքեր,
Ա՛խ, մի՞ բերեք իմ աչքիս դեմ
Անցյալ ավուրց փայլուն պատկեր:

Անցյալ ավո՛ւրց… ավո՛ւրց ոսկի,
Որք նորա հետ անցուցի,
Որուն իմ սիրտ, իմ կյանք, հոգի
Եվ իմ սուրբ սեր զոհեցի:

Բայց ինձ համար նա չքացավ
Անհայտության մութի մեջ,
Թողեց միայն ինձ դառն ցավ,
Մարած սրտումս՝ կայծ անշեջ:

Այդ սուրբ սիրո անշեջ կրակ
Պիտ վառ պահեմ իմ սրտում,
Մինչ մահ նորա սուրբ հիշատակ
Պիտ երազեմ իմ մտքում: